Կարծիք

/Իրինա Հովհաննեսի Բաբաջանյանի «Հոգեբանի հետազոտական և գործնական դիագնոստիկայում տեսական մոտեցումների և սկզբունքների կիրառման յուրահատկությունները» վերնագրով ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության/

Ներկայումս բազմաթիվ գիտությունների ոլորտում գիտության թռիչքաձև զարգացման, նոր գերճշգրիտ լաբորատոր սարքավորումների առկայության, ինչպես նաև գիտական արդյունքի նկատմամբ ապացուցողական մոտեցումները հանգեցրել են մի շարք գիտական սկզբունքների, դրդապատճառային մոդելների վերաիմաստավորման, հատկապես ելակետային հասկացությունների վերաշարադրման և արդյունքի արտադրական շրջապտույտի ապահովման: Այդ բոլորից անմասն չէ նաև հոգեբանական գիտությունը, որը նույնպես կարիք ունի արդի գիտության չափանիշներով զարգանալու: Ժամանակակից հոգեբանության ձևավորումը կապված է նորի առաջացման և գոյություն ունեցող պարադիգմների զարգացման հետ, որոնք միտված են գործնական կիրառման: Դրան նպաստեցին մեր երկրում վերջին հինգ տասնամյակում ընթացող տարաբնույթ երևույթներն և իրադրությունները՝ կացութաձևի փոփոխությունը, բնական աղետները, ազգամիջյան տնական ծանր կոնֆլիկտներն ու բացասական ելքով պատերազմները՝ զոհեր, գերիներ, անհետ կորածներ, խեղվածներ, ինչպես նաև առկա տեղեկատվական և հիբրիդային պատերազմները, ճգնաժամերը: Այս համատեքստում հոգեբանների պրակտիկայում կիրառվող մեթոդների գիտական հիմնավորվածության խնդիրը նույնպես արդիական է: Հոգեբանության զարգացման պատմությունը ցույց է տալիս տեսական և գործնական հոգեբանության փոխազդեցության ճգնաժամային դրսևորումների բազմաթիվ փաստեր, որոնք կապված էին ընդհանուր գիտության զարգացման արտաքին և ներքին խնդիրների հետ: Դա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ հոգեբանի հետազոտության և գործնական գործունեության մեջ հոգեբանական ճանաչողության ծագումնաբանական սկզբունքների առկայության առանձնահատկությունները երկար տարիներ գրավել են գիտնականների ուշադրությունը:

Վերը նշված խնդիրների մեկնաբանմանն է նվիրված Իրինա Հովհաննեսի Բաբաջանյանի «Հոգեբանի հետազոտական և գործնական դիագնոստիկայում տեսական մոտեցումների և սկզբունքների կիրառման յուրահատկությունները» վերնագրով ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը: Հեղինակի նպատակն է վերլուծել, տարբեր երկրների օրինակով, մասնագետների հետազոտական և պրակտիկ գործունեության մեջ հոգեբանական գնահատման (ախտորոշման) մեթոդների կիրառման տեսական մոտեցումների, սկզբունքների և հարակից խնդիրների քննարկման արդի միտումները: Հեղինակը առաջարկել է հետազոտության հետևյալ խնդիրները.

1. Վերլուծել հոգեբանի գործունեության հետազոտության և գործնական գնահատման տեսական մոտեցումների և սկզբունքների կիրառման առանձնահատկությունների ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումը:
2. Հիմնավորել տեսական և էմպիրիկ հետազոտությունների ռազմավարությունը, ինչպես նաև համակարգել տվյալների հավաքագրման և վերլուծության մեթոդները:
3. Իրականացնել հոգեբանական ճանաչողության և պրակտիկայի ուսումնասիրության տեսական խնդիրների համեմատական վերլուծություն:
4. Հարցման միջոցով ուսումնասիրել հոգեբանի պրակտիկայում տեսական գիտելիքների կիրառման առանձնահատկությունները:
5. Բացահայտել ախտորոշման գործընթացի մեթոդաբանական հիմքերի առանձնահատկությունները խորհրդատվական և հոգեթերապևտիկ գործունեության մեջ:
6. Որոշել հոգեբանական օգնության և ծառայությունների ներկայացման, առաջխաղացման և ընկալման հիմնական չափանիշները:

Հետաքրքիր և ոչ շաբլոն ձևակերպում ունի հետազոտության գիտական վարկածը. ենթադրվում էր, որ անձի և նրա հոգեկան գործընթացների ու վիճակների մասին գիտելիքներ ձեռք բերելու հոգեբանական գործիքները, որոնք ունեն բարդ հայեցակարգային և մեկնաբանական մոտեցումներ, այսինքն՝ հոգեբանական տեսությունների, մոտեցումների և հոգեբանական հետազոտության մեթոդների «պոլիֆոնիան», մասնավորապես՝ հոգեդիագնոստիկան, հակված են վերափոխվել հոգեբանների պրակտիկ գործընթացում՝ ի տարբերություն հետազոտական գործունեության:

Աշխատանքի գիտական նորույթը ձևակերպված է խիստ հստակ՝ բխելով հետազոտության նպատակից՝ համապարփակ համեմատական վերլուծությունը (տեսական և էմպիրիկ տվյալների) հնարավորություն տվեց բացահայտել տեսական գիտելիքների ձևավորման և հարաբերակցության առանձնահատկությունները հոգեբանների պրակտիկ գործունեության մեթոդների և, մասնավորապես՝ հոգեբանական գնահատման մեթոդների հետ: Այս հարաբերակցության ընդգծված առանձնահատկությունները վկայում են հերմենևտիկ բնույթի տեսական գիտական սկզբունքներից հեռավորության միտումները, ինչպես նաև այցելուների գնահատման մեթոդների (զրույց, դիտարկում, թեստեր) օգտագործման ժամանակ հայեցակարգային տեսակետների ռացիոնալացման գործընթացը, ի տարբերություն հետազոտության մասնակիցների գնահատման, որտեղ գերակշռում են խմբային ցուցանիշները և դրանց վիճակագրական բնութագրերը:

Ներածության բաժնում ձևակերպված են նաև հետազոտության օբյեկտը, առարկան, աշխատանքի մեթոդական և տեսական հիմքերը, պաշտպանության ներկայացվող դրույթները: Պետք է նշել, որ այս բաժինը շարադրված է ներկայացվող չափանիշներին համահունչ, այստեղ նորամուծություն էր բանալի բառերի առկայությունը:

«Ծագումնաբանական սկզբունքների կիրառման առանձնահատկությունները հոգեբանի գիտագործնական գործունեության մեջ» գլխում բացահայտվում են հոգեբանության ծագումնաբանական սկզբունքների հիմնական դրույթները, տեղեկացվում է մոտեցումների և դրանց օգտակարության մասին, ինչպես նաև հոգեբանության ոլորտում նախկինում ուսումնասիրված մոդելների հետ կապված որոշ հիմնային տեղեկություններ:

Հեղինակը հիմնախնդրի հետ կապված մտահանգումներում հենվում է նաև Ժ.Պիաժեի, Բ.Հոֆերի, Փ.Փինթրիկի, Ռ. Կիթչեների, Բ. Մագոլդանի, Մ. Շոմմերի, Ա. Գոլդմաննի, Մ. Բիշոփի, Դ.Դարլաստոն-Ջոնսի, Միփեյ Գոյի, Ն.Կիրիակոպուլունի, Ս.Վոսնիադունի, Կ.Փադիֆուտի, Յ.Սյաոնի, Կ.Վիսենտենի և բազմաթիվ այլ ճանաչված գիտնականների աշխատանքներին, որոնք առավել ընդգրկուն և հիմնավոր են դարձնում առաջ քաշված սեփական մոտեցումները:

«Ժամանակակից կիբառական հոգեբանության ձևավորման գիտական հիմքերի խնդիրը» գլխում ատենախոսը ներկայացնում է արդի կիբառական հոգեբանության ձևավորման խնդրի վերաբերյալ գիտական սկզբնաղբյուրների վերլուծություն, քանի որ պատմական ակնարկը թույլ է տալիս ավելի լիարժեք ներկայացնել հոգեբանության ենթաճյուղերում հոգեթերապիայի, հոգեբանական խորհրդատվության և միջամտությունների զարգացման ներկայիս միտումները: Կիբառական հոգեբանությունը նկարագրելիս նշվում է, որ դա հոգեբանական մեթոդների և գիտական հոգեբանության արդյունքների օգտագործումն է մարդու վարքի և փորձի գործնական խնդիրների լուծման համար, որը ներառում է տարբեր ենթակարգեր:

Այս գլխի առաջին և երկրորդ պարագրաֆներում ներկայացվում են հոգեբանական ճանաչողության տեսական խնդիրների վերլուծության և պրակտիկայի ուսումնասիրության ռուսաստանյան և հայկական տեսակետները: Շարադրանքից պարզ է դառնում, որ ատենախոսը տիրապետում է հիմնախնդրի վերը նշված հեղինակների գիտական աշխատանքներին, որոնք ներկայացված են ըստ կոնկրետ ուղղությունների:

«Հոգեբանի պրակտիկայում հոգեբանական գնահատման մեթոդների գիտական կիբառական նշանակության վերլուծությունը» երրորդ գլխի նպատակն է իրականացնել հոգեբանական գնահատման մեթոդների կիբառման ժամանակակից խնդիրների և պահանջների վերլուծություն, որոնք բացահայտվել են տարբեր երկրների գիտնականների կողմից: Ուսումնասիրությունը չի հավակնում մեգավերլուծության, բայց հաշվի է առնում տարբեր գիտական ամսագրերի և ուսումնական գրքերի ժամանակակից հոդվածները, որոնք հրատարակվել են վերջին տարիների ընթացքում: Այսպիսով, կատարված վերլուծությունը համեմատական բնույթ է կրում և ցույց է տալիս հոգեբանական գնահատման մեթոդների մոտեցումների առանձնահատկությունները և տարբեր երկրների հոգեբանների հետազոտական և գործնական գործունեության մեջ դրանց օգտագործման հիմնական պահանջներին համապատասխանության աստիճանը:

Գլխի վերջում հեղինակը հանգում է հետևյալ կարևոր եզրակացության. «Հոգեբանական գնահատման մեթոդների մասին դժվար է եզրակացություն անել գիտական բնույթի հաշվառման աստիճանի հիման վրա, որքանով են ճշգրիտ պահպանվում թեստի փոխանցման կանոնները և ինչ վիճակագրական ապարատով է ապացուցվում վավերականությունը: Որոշ երկրներում (օրինակ՝ Ռուսաստանում և Հայաստանում) հոդվածների և գրքերի հեղինակները չեն անդրադառնում հոգեբանների ազգային ասոցիացիաների պահանջներին, դժվար է համեմատել տարբեր երկրներում կատարված ուսումնասիրությունների ճշմարտացիությունը, քանի որ հոգեբան հետազոտողի էթիկական սկզբունքների պահպանումը նշված չէ»:

Արդյունքում ժամանակակից փոփոխություններն ազդել են հետազոտական տվյալների և հոգեբանական ախտորոշման ստացման ձևի և ձևաչափի վրա. հոգեբանի և այցելուի հանդիպում անձամբ կամ հեռավար, թեստի լրացում թղթային ձևաթղթի վրա կամ համակարգչի միջոցով, թեստերի և հարցումների համար GOOGLE - Ի առցանց ձևաթղթերի օգտագործում և թեստավորման տվյալների գլոբալ հավաքագրում: Այս փոփոխությունները բացահայտում են հետաքրքիր հեռանկարներ (երկար ժամկետներ, միջմշակութային համեմատություններ, արագ գնահատում և վերլուծություն) և, միևնույն ժամանակ, որոշակի սահմանափակումներ (պատասխանների վերահսկում, բարդ հետադարձ կապ և այլն):

Հաջողված կարելի է համարել նաև չորրորդ «Հետազոտության ծրագիր, փուլեր, մասնակիցների ընտրանք և մեթոդներ» գլուխը: Ատենախոսը հետազոտության ընթացքում օգտագործել է տեսական և էմպիրիկ տվյալների հավաքագրման, վերլուծության և մեկնաբանման որակական և քանակական մեթոդներ: Տվյալների հավաքագրման համար օգտագործվել են թեմատիկ և որակական բովանդակության վերլուծության մեթոդներ, մեկնաբանական ֆենոմենոլոգիայի մեթոդներ, հարցազրույցներ և հարցումներ, տվյալների վիճակագրական վերլուծություն: Աշխատանքում ուսումնասիրվում են տարբեր գիտական ամսագրերի, ժամանակակից հոդվածներ, մենագրություններ և դասագրքեր, որոնք հրատարակվել են տարբեր լեզուներով վերջին տասնամյակների ընթացքում:

Գիտական թեզի տարբեր բաժիններում ներկայացված վերլուծությունը համեմատական բնույթ է կրում և ցույց է տալիս հոգեբանական գնահատման մեթոդների մոտեցումների առանձնահատկությունները և տարբեր երկրների հոգեբանների կողմից հետազոտություններում և պրակտիկայում դրանց օգտագործման հիմնական տեսական պահանջներին համապատասխանության աստիճանը:

Հետազոտությանն ընդգրկված են վիճակագրական հավաստիություն ապահովող 377 մարդ, ովքեր մասնակցել են տարբեր փուլերում իրականացված հարցմանը:

«Հետազոտության արդյունքներ և վերլուծություն» հինգերորդ գլխում հեղինակը ներկայացնում է տարբեր մեթոդներով հետազոտությունների տվյալների մշակման գործընթացը և ստացված վերջնարդյունքները, մասնավորապես քննարկվում են հոգեշտղողական գործունեության մեջ կիրառական ախտորոշման գործընթացի մեթոդական հիմքերի առանձնահատկությունների էմպիրիկ ուսումնասիրության, ախտորոշման գործընթացի մեթոդաբանական հիմքերի առանձնահատկությունների ուսումնասիրության համեմատական վերլուծությունը խորհրդատվական և թերապևտիկ գործունեության մեջ, հոգեբանական աջակցության և ծառայությունների ներկայացման և խթանման բովանդակային վերլուծության, հոգեբանական աջակցության և ծառայությունների ներկայացման և առաջարկման այցելուների հարցման արդյունքները, հոգեբանական ծառայություն մատուցման փաստաթղթերի համեմատական վերլուծության հարցերը: Փորձարարական հետազոտությունները կազմակերպված են առավելագույն օշգրտությամբ, գիտահետազոտական աշխատանքին բնորոշ անաչառությամբ:

Փորձարարական մասից հետո ատենախոսը տեսական և հետազոտական ուսումնասիրությունները ամփոփել է 9 եզրակացությունների ձևով, որոնցից, մեր կարծիքով, հոգեբանական գիտության զարգացման համար հատկապես ուղենիշային են հետևյալները.

1. Ժամանակակից հոգեբանության մեջ տեսական կողմնորոշման հայեցակարգայնացման և չափագրման, ինչպես նաև պրակտիկ հոգեբանների գործունեության կազմակերպման հարցերը իրենց ուսումնասիրություններում հայտնվում են հիմնականում վերլուծական - էմպիրիկ և առարկայական - սուբյեկտային մակարդակում:
2. Ժամանակակից հոգեթերապևտիկ պրակտիկայի ձևավորման մեջ գիտական հիմքերի և սկզբունքների առկայության խնդրի տեսական վերլուծությունը պետք է հիմնված լինի նախկին գիտական նվաճումների, լիարժեք կրթական ցիկլի, ինչպես նաև էթիկական չափանիշներին համապատասխանության և այցելուի հատուկ կարիքները հաշվի առնելու վրա:
3. Վերջին տարիների վերափոխումները, և հատկապես Covid -19 համաճարակը ու հետպատերազմյան իրադարձությունները ազդել են հոգեբանական գնահատական ստանալու և հոգեբանական ծառայություններ մատուցելու ձևի և ձևաչափի վրա, այն է՝ հոգեբանի և այցելուի միջև իրական կամ հեռավար հանդիպման ձևաչափը, թեստի լրացումը թղթային ձևաթղթի վրա կամ համակարգչի միջոցով, թեստավորման և հարցումների առցանց ձևաթղթերի օգտագործումը, թեստավորման տվյալների գլոբալ հավաքագրումը, հաղորդակցման լեզվական համատեքստի միտումները, այսինքն՝ թեզարիուսի փոփոխությունները: 2
4. Անձի և հոգեվիճակի մասին գիտելիքներ ստանալու հոգեբանական գործիքները, որոնք ունեն դուալիստական բնույթ, այսինքն՝ հոգեբանական տեսություններ և հոգեբանական հետազոտության մեթոդներ, պահպանվում են, բայց հակված են վերափոխվելու հոգեբանի գործնական գործունեության գործընթացում:

Իրինա Հովհաննեսի Բաբաջանյանի ատենախոսական աշխատանքը գրված է գիտական բարեխղճությամբ, խնամքով և գրագետ: Թեզի բովանդակությունն արտացոլող գլուխներն և պարագրաֆները համոզիչ են և համահունչ գիտական նպատակին, հիմնախնդրի ուսումնասիրման ու վերլուծման քայլերը տրամաբանորեն կապակցվում ու հաջորդում են միմիյանց: Աշխատանքում մեծ չափով օգտագործվում են աղյուսակներ, դիագրամներ, գրաֆիկներ որոնք նպաստում են նյութի առավել գնական ներկայացմանը: Ամենակարևորն այն է, որ աշխատանքն ունի գործնական ուղղվածություն, ինչը թույլ է տալիս ուղղորդել հոգեբանի մասնագիտական գործունեությունն առավել օբյեկտիվ վերջնարդյունքի ձեռքբերմանը:

Ատենախոսությունը շարադրելիս հեղինակը օգտվել է 226 հայկական և արտասահմանյան գիտական աղբյուրներից, որոնք հիմնականում հրատարակվել են վերջին տարիների ընթացքում:

Վերը նշված արժանիքներին զուգահեռ ատենախոսության մեջ առկա են որոշակի թերություններ, որոնց հաշվի առնելը ավելի լիարժեք կդարձներ սույն աշխատանքը.

1. Ներածության մեջ ներկայացվող խնդիրները նպատակահարմար էր դասակարգել ըստ տեսական, մեթոդական և փորձարարական բնույթի:

2. Էջ 15–ում՝ առաջին պարբերության մեջ «հոգեբանական հետազոտության արդի միտումները» հոդվածում... ձևակերպումը կարծում եմ հեղինակի լեզվամտածողության հետ կապված, թերի է, որովհետև, եթե այն հոդվածի վերնագիր է պետք է գրել չակերտներում և մեծատառով:
3. Առաջին գլխում տարբեր հեղինակների մոտեցումները ներկայացնելիս նպատակահարմար էր ընդհանրացնել սեփական մասնագիտական վերաբերմունքով:
4. Երրորդ գլխի վերջին 2 պարբերությունները պահանջում են քերականական խմբագրում, այն անհասկանալի է շարադրված/էջ 110–111/:
5. Երկրորդ գլխի հետ կապված նպատակահարմար ենք համարում անցում կատարել ապացույցների վրա հիմնված պրակտիկային, որն ներկայումս առավել գիտակենտրոն է և օբյեկտիվ: Այս դեպքում հոգեկան գործունեության հիմքում պետք է դնել նաև ուղեղում կատարվող նեյրոֆիզիոլոգիական և կենսաքիմիական գործընթացները: Նման մոտեցումը ինչ որ տեղ նաև ինտեգրատիվ մոտեցում է:
6. Հոգեբանի մասնագիտական հետազոտական և պրակտիկ գործունեության մեջ հոգեբանական գնահատման մեթոդների կիրառման տեսական մոտեցումները մեծ չափով կախված են հոգեբանի նեղ մասնագիտական կրթական կոմպետենտությունից /բակալավրիական և մագիստրոսական հոգեբանական կրթություն, նեղ մասնագիտացումների կարևորում, պարբերաբար նեղ մասնագիտական վերապատրաստումներ տվյալ ոլորտի համապատասխան պաշտոնական կառույցներում, ապացուցողական հենքի վրա գործունեություն.../:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Իրինա Հովհաննեսի Բաբաջանյանի «Հոգեբանի հետազոտական և գործնական դիագնոստիկայում տեսական մոտեցումների և սկզբունքների կիրառման յուրահատկությունները» վերնագրով ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ–ում գիտական աստիճանների շնորհման կարգի 7–րդ կետի պահանջներին, այսինքն այն ենթադրում է հոգեբանության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում: Արդյունքում գտնում ենք, որ ատենախոսության հեղինակը միանգամայն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Կամո Երեմի Վարդանյան

Կ.Ե.Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մարիամ Մկրտիչի Իսպիրյան

30.09.2024թ.